



ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՇԱԿՈՒԹԱՔԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ՝ ՆՎԻՐՎԱԾ ԷՂՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՎԱՐԻՍ ՄԱՍՍՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

Ժողովածուն լույս է տեսել «Մշակութաբանություն. 20-րդ դար» մատենաշարով: Այն նվիրված է ժամանակակից գիտության մեջ մշակութաձագման ու մշակութային ժառանգության հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Ժողովածուում փորձ է արվել ի մի բերելու մշակութաբանական-գենետիկական հետազոտությունների ոլորտի փորձը և նշելու այդ բնագավառում հետագա մշակումների հեռանկարային ուղղությունները: Նկատենք, որ մշակութաձագման հետազոտումը մշակութաբանության արմատական հիմնախնդիրներից է. մշակույթի ծագման և ինքնարարման հարատև գործընթացները մարդկային կեցության անբաժան բաղկացուցիչներն են, ընդգրկում են նրա գործունեության բոլոր ձևերը, իմաստներն ու արդյունքները:

Գիտության մեջ մշակույթի գենետիկայի հիմնախնդիրը 1920-ական թվականների կեսերին առաջադրել է ակադեմիկոս Ն. Մառը, իսկ «մշակութաձագում» /"культурогенез"/ հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 60-ական թվականների կեսին՝ լեհ հեղինակ Ստանիսլավ Լեմի «Պատահարի փիլիսոփայություն»¹ աշխատության մեջ: Մշակութաձագման գործընթացի հիմնական բովանդակությունը եղել և մնում է մշակույթի ձևերի ու երևույթների ծագման մասին հարցը: Տևական ընդմիջումից հետո խորհրդային մշակութագենետիկական հետազոտությունների վերածնունդը տեղի ունեցավ միայն 1970-ական թվականների սկզբին և կապված է նշանավոր գիտնականներ Էդուարդ Մարգարյանի /1929–2011/² և ակադեմիկոս Ալեքսեյ Օկլադնիկովի /1908–1981/³ անունների հետ: Հենց նրանք էլ միաժամանակ և իրարից

* Культурогенез и культурное наследие / Науч. ред. и сост. А.В. Бондарев. М. – СПб.: Центр гуманитарных инициатив, 2014, 640 с.

¹ Տե՛ս **Լեմ Ս.Է.**, *Փիլոսոփիա случая* /пер.с пол. Б.А.Старостина. М., "АСТ", 2005:

² Տե՛ս **Մարգարյան Է.Ս.**, *О генезисе человеческой деятельности и культуры*. Ер., Из-во АН Арм. ССР, 1973:

³ Տե՛ս **Օկլադնիկով Ա.Փ.**, *Этногенез и культурогенез*// Проблемы этногенеза народов Сибири и Дальнего Востока: тезисы докладов Всесоюзной конференции. Новосибирск, 1973:

անկախ ռուսալեզու գրականության մեջ առաջին անգամ օգտագործեցին այդ հասկացությունը: Է. Մարգարյանն իր աշխատության մեջ, ըստ էության, վերականգնողական գեներտիվը՝ որպես հայեցակարգային մոտեցում, ինչը, նրա կարծիքով, թույլ է տալիս բացահայտել, «մերկացնել» ուսումնասիրվող երևույթի միջուկը և դրա ծագման հիմնական պատճառները:

Ներկայացվող ժողովածուն բաղկացած է ութ թեմատիկ բաժիններից, որտեղ ընդգրկված են շուրջ քառասուն հեղինակների ուսումնասիրություններ՝ նվիրված մշակութաժազման հիմնախնդրի տարբեր տեսանկյունների քննությանը: Հետազոտություններում հեղինակները, հիմնվելով ամենատարբեր պատմամշակութային նյութերի վրա, փորձում են վերլուծել մշակութա-գեներտիկական գործընթացների, ինչպես նաև մշակութային ժառանգության՝ որպես դրանց ամփոփիչ արդյունքի մի շարք տեսական և զուտ փորձառական հարցեր:

Առաջին բաժնի խորագիրն է «Է. Ս. Մարգարյանը և Վ. Մ. Մասսոնը հայրենական մշակութա-գեներտիկական հետազոտությունների վերածնության ակունքներում»:

Ժողովածուի գիտական խմբագիր ու կազմող Ա. Բոնդարևի հոդվածում արժևորվում է⁴ տվյալ բնագավառում Էդուարդ Մարգարյանի գիտական վաստակը: Նա մասնավորապես նշում է, որ Է. Մարգարյանը հայրենական գիտության մեջ առաջիններից էր, ով ընդգծեց մշակույթի գեներտիկական ուսումնասիրության խնդրի բացառիկ կարևորությունն ու տեսական-մեթոդաբանական բեղմնավորության գիտակցման անհրաժեշտությունը: Նրա դոկտորական ատենախոսության⁵ կարևորագույն դրույթներից է այն պնդումը, որ որոշակի դասի երևույթների մասին ստեղծված գիտական տեսության բեղմնավորության աստիճանը ուղղակի կախվածության մեջ է այդ երևույթների ծագման սկզբունքների մշակումից: Նրա խորին համոզմամբ՝ մարդկանց հասարակական կյանքի ծագման գործընթացում հենց մշակույթը ստեղծեց հասարակությունը: Իր տեսությամբ Է. Մարգարյանը ցույց տվեց ավանդույթների ու նորարարությունների դիալեկտիկական փոխկապվածությունը, որը և կազմում է մշակութաժազման գործընթացների միջուկը և շարժիչ հիմնարար մեխանիզմը: Ս. Բոնդարևը իր հոդվածը ամփոփում է հետևյալ եզրակացությամբ. նշանակալի չափով հենց շնորհիվ Է. Մարգարյանի ջանքերի Ռուսաստանում վերածնվեցին մշակութա-գեներտիկական հետազոտությունները, հենց նրա աշխատությունները որպես հիմք ծառայեցին ոչ միայն մշակութաբանության ամենաազդեցիկ հայեցակարգերից մեկը ստեղծելու հայրենական գիտության մեջ, այլև վճռական նշանակություն ունենալու մշակութաժազման հետազոտության մեջ փիլիսոփայական-մշակութաբանական մոտեցման մշակման համար:

Ժողովածուում ընդգրկված հոդվածներից չորսը նվիրված են նշանավոր հնագետ, արևելագետ ու մշակութաբան, մի շարք երկրների ակադեմիկների ակադեմիկոս Վադիմ Միխայլովիչ Մասսոնի կենսագրության, գիտական գործունեության ու ժառանգության քննությանը: Վ. Մասսոնը ծնվել է 1929 թ. Սամարղանդում, հայտնի հնագետ Մ. Մասսոնի ընտանիքում: Նրանց նախնի-

⁴ Տե՛ս **Бондарев А.В.**, Вклад Э.С. Маркаряна в становлении отечественных культурогенетических исследований, էջ 31-55: Անվանի մշակութաբան Է.Ս. Մարգարյանի մասին մանրամասն տե՛ս **Хоруженко К.М.**, Культурология. Энциклопедический словарь. Ростов-на-Дону, 1997, էջ 289-290:

⁵ Տե՛ս **Маркарян Э.С.**, Методологические проблемы системного исследования общественной жизни. Автореф. дис....д-ра филос наук. М., 1967:

ները ֆրանսիական նշանավոր արիստոկրատական տոհմից են, յակոբինյան ահաբեկչության տարիներին ստիպված են եղել տեղափոխվել Ռուսաստան և ընդմիջտ մնալ այնտեղ: 1950 թ. ավարտելով Տաշքենդի համալսարանը՝ Վ. Մասսոնն ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ նյութական մշակույթի պատմության ինստիտուտի /Լենինգրադ/ ասպիրանտուրան /գիտական ղեկավար՝ պրոֆ. Մ. Դյակոնով/:

1970-ական թվականներից Վ. Մասսոնը ձեռնամուխ է լինում հնագիտության մեջ սոցիոլոգիական ուղղության մշակմանը, իսկ 1980-ական թվականների կեսերից սկսած՝ նրա գիտական հետաքրքրությունների մեջ աստիճանաբար սկսում է գերակշռել մշակութաբանական թեմատիկան: Վ. Մասսոնի կարծիքով՝ մշակութաբանության համար հնագիտության նշանակությունը հատկապես կարևորվում է որպես տեղեկատվական անսպառ աղբյուր ծառայելու առումով: Վ. Մասսոնը հրատարակել է բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված մշակութաժազման մեխանիզմի վերլուծությանը, դրա փուլերին, խթաններին ու ռիթմերին: Նրա հիմնարար աշխատությունները *մշակութաժազման բարախող ռիթմերի ֆենոմենի* հետազոտման հիմքը դրեցին: Ընկալելով Ա. Օկլադնիկովի մշակութաբանական գաղափարները մշակութաժազման գործընթացների դիալեկտիկական նախահիմքերի մասին՝ Վ. Մասսոնը դրանք օգտագործեց իր հիմնարար դրույթների ձևակերպման մեջ: Նա նաև ըստ արժանվույն գնահատեց Է. Մարգարյանի աշխատությունների նշանակությունը, որոնց վրա հիմնվելով՝ մշակութաժազման դիալեկտիկական բնույթը պայմանավորեց ավանդույթների ու նորարարությունների բարդ փոխազդեցությամբ:

Ժողովածուում ընդգրկված է Է. Մարգարյանի հոդվածներից մեկը⁶: Դա հեղինակի վերջին՝ ամփոփիչ աշխատանքներից է, որը լույս է տեսել հետմահու: Այստեղ Է. Մարգարյանը ներկայացնում է մշակութաբանական տեսության ստեղծման պատմությունն ու տրամաբանությունը, դրա գործնական նշանակությունը մարդկության ինքնապահպանման գաղափարախոսության մշակման համար: Այլ կերպ ասած՝ այս հոդվածը համառոտ պատկերացում է տալիս Է. Մարգարյանի առաջադրած տեսության ծագման, նրա գիտական ժառանգության ու «գիտական կտակի»⁷ մասին: Է. Մարգարյանն իր հրատարակած աշխատություններից առանձնացնում է «Մշակույթի տեսությունը և ժամանակակից գիտությունը»,⁸ քանի որ դա այդ տեսության տեսական հիմքերի մշակման առաջին փորձն էր: Հոդվածի շնորհիվ կարելի է պատկերացում կազմել նաև այն էական ազդեցությունների, գիտական արձագանքների և առարկությունների մասին, որոնք ունեցել է Է. Մարգարյանի առաջադրած մշակութաբանական հայեցակարգը խորհրդային Միությունում ու նրա սահմաններից դուրս, ռուս և արտասահմանցի գիտնականների հետ նրա բազմամյա բեղմնավոր գիտական համագործակցության, ինչպես նաև գիտական էթիկայի այն բարձր սկզբունքների մասին, որոնց վրա կառուցված է եղել այդ տևական համագործակցությունը:

⁶ Տե՛ս **Маркарян Э.С.**, О значении разработки основ общей культурологической теории для формирования идеологии самосохранения человечества, էջ 122–139:

⁷ Տե՛ս **Маркарян Э.С.**, Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества. Ер., Изд-во РАУ, 2008:

⁸ Տե՛ս **Маркарян Э.С.**, Теория культуры и современная наука. Логико-методологический анализ. М., "Мысль", 1983:

Ժողովածուում ներառված է նաև Վ. Մասսոնի «Մշակութաձագման ռիթմերի բաբախող դինամիկան և մշակութային ժառանգությունը»⁹ հոդվածը: Քննարկվող խնդրի վերաբերյալ իր հայեցակարգը Վ. Մասսոնը մշակում է իբրև հակաթեզ գիտության մեջ նախկինում տարածված ֆորմացիոն էվոլյուցիոնիզմի տեսությանը: Նա իր տեսակետը ձևակերպում է՝ հենվելով Հին աշխարհի պատմության *արխայիկ, հին, միջնադարյան* շրջանների՝ Ի. Ղյակոնովի կատարած բաժանման վրա: Վ. Մասսոնը նշում է, որ պատմության առաջադիմական զարգացման փուլերը հաճախ հերթափոխվում են անկմամբ, լճացմամբ և անգամ՝ հետաճով: Դա հատկապես հստակ է երևում մշակութազենտիկական երևույթների օրինակով, ինչը թույլ է տալիս խոսել մշակութաձագման յուրատեսակ ռիթմերի մասին: Մշակույթի զարգացման ուղիների հարցում Վ. Մասսոնն առանձնացնում է մշակութաձագման գործընթացի երկու հիմնական ձևեր՝ ինքնաբերական և խթանված փոխակերպություն:

Պատմական գործընթացին բնորոշ է ոչ միայն միագծությունը, այլև բարդ, զարգացման հակասական ուղին՝ դանդաղելու, կազմալուծումների, անգամ՝ հետաճի փուլերով: Մշակութաձագման ռիթմերի մեջ անկումները առաջ են գալիս մի շարք պատճառներով, այդ թվում՝ սոցիալական և քաղաքական կամ ուղղակի ռազմաքաղաքական իրադրությամբ պայմանավորված: Մշակութային ժառանգությունը ձևավորվում է էկոլոգիական միջավայրին հարմարվելու տևական գործընթացի արդյունքում: Մշակութային ժառանգության զարգացման՝ որպես մշակութաձագման գումարային դրսևորման մեջ չկա պարզունակ առաջընթաց. առկա են բաբախող ռիթմեր: Ուստի, ելնելով մշակութաձագման ռիթմի բնույթից, ձևավորվում են յուրատեսակ մշակութային շերտեր, որոնք ենթարկվում են որոշակի փոխակերպման՝ ժառանգության ընդհանուր պահպանմամբ, բայց մի շարք բաղադրատարրերի բնական կորստով: Այդ շերտերը ամբողջության մեջ կազմում են հենց մշակութային ժառանգությունը՝ ժամանակային զարգացմամբ: Մշակութաձագման օջախները առաջադիմության թափառող կենտրոններ են:

Ժողովածուի հավելվածում հրատարակություններին առաջարկվում է վերահրատարակել Վ. Մասսոնի և Է. Մարգարյանի «Ընտիր երկերը», իսկ բուհական համակարգին՝ նպաստել նրանց աշխատությունների օգտագործմանը ժամանակակից կրթական գործընթացներում, մասնավորապես՝ «Մշակույթի տեսություն», «Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն», «Համաշխարհային գեղարվեստական մշակույթ» դասընթացներում:

Ժողովածուն կարող է հետաքրքրել մշակութաբաններին, պատմաբաններին, ազգագրագետներին, լեզվաբաններին, նաև հնագիտական մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվողներին:

ՄԱՐԻԵՏԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական
գիտությունների թեկնածու*

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական
գիտությունների թեկնածու*

⁹ St'ya **Массон В.М.**, Пульсирующая динамика ритмов культурогенеза и культурное наследие, էջ 213–255: